

# ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

## III

Բլոնդել փողոցի գարեջրատունը:

Ամուսնանալուց յետոյ Ռիվելքը ձեռք էր քաշել գարեջրատնից: Սիդոնին ուրախ կը լինէր, եթէ նա երեկոները տանից դուրս գար, գնար մի որ է ընտիր ժաղովարան, ժամանակ անցնէր հարուստ ու լաւ հագնուած մարդկանց շրջանում: բայց այս միտքը, թէ իր ամուսնը կարող էր վերադառնալ չիրուխների ծխով մի գարեջրատունը, հին ժամանակուայ բարեկամների, Սիդոնին ու անբախտացնում: Եւ Ռիվելքը այլ ևս չը զնաց այնտեղ, թէ հեշտան չէր այդ նրա համար: Նրա համար գրեթէ հայրենիքի յիշատակ էր այդ՝ հին Պարիզի մի յետ ընկած անկիւնում գտնուող գարեջրատունը: Կառքերի սակաւութիւնը, ներքին յարկի բնակարանները բարձր ու վանդակապատ լուսամուտներով, գեղագործական ապրանքների ու դեղանիւթերի թարմ հոսո՞ւ այդ փոքրիկ Բլօնդէլ փողոցին մի հեռաւոր նմանութիւն էին տալիս Բազէլի կամ Ցիւրիխի որոշ փողոցների հետ: Այդ գարեջրատունը պատկանում էր մի շվեյցարացու և լիքն էր լինում շվեյցարացիներով: Դուռը բացուելիս, չիրուխների ծխի մշուշի և հիւսացին բարբառների ծանր մթնոլորտի միջով երևում էր մի ցածիկ ու ընդարձակ սենեակ առաստաղի գերաններից կախուած խոզապուխտներով, շարէշար գարեջրատակառներով, մի թզչափ բարձրութեամբ շաղ տուած փայտի թեփով և հաշուեսեղանի վրայ մեծ-մեծ աղցանամաններում դարսած շագանականնման վարդագոյն գետնախնձորներով ու զամբիւղների մէջ լցրած նոր թխած աղի բեկսցիներով:

Քսան տարի շարունակ Ռիվելը ունէր այդտեղ իր երկար չիրուխը, որի վրայ զրուած էր իր անունը և որ պահւում էր մշտական յաճախսորդների չիրուխակալում, և իր սովորական սեղանը, որի չուրջը նստում էին մի քանի համեստ ու լուսկեաց հայրենակիցներ, որոնք, առանց հասկանալու, բայց հիացմուն-

քով, լսում էին Շէրի և Դըլօբէլի անվերջ վիճարանութիւնները: Երբ Ծիսլէրը դադարեց գարեջրատուն գնալուց, այդ վերջին երկում էլ ուսները կարեցին այնտեղից, մի քանի յարգելի պատճաներով: Նախ և առաջ, պ. Շէրը շատ հեռու էր կենում այժմ: Իր զաւակների մեծահոգութեան չորհիւ նա, վերջապէս, իրականացրել էր իր ամբողջ կեանքի երազը:

—Երբ որ հարստանամ, ասում էր միշտ այդ փոքրիկ մարդը իր՝ Մառէլի տիսուր բնակարանում, սեփական տուն կ'ունենամ Պարիզի մօտակացքում, գրեթէ գիւղում, մի փոքրիկ պարտէզով, որ ինքս իմ ձեռքով կը փորեմ ու կը ջրեմ: Այդ իմ առղջութեանը աւելի օգուտ կը բերի, քան մայրաքաղաքի յուղ մունքները:

Եւ ահա նա ունէր այժմ իր սեփական տունը, բայց, կարող էք հաւատալ խօսքիս, որ նա ուրախ չէր զգում իրան այնտեղ:

Մօնուժումն էր այդ, Պարիզի շրջապատային երկաթուղու գծի վրայ, «փոքրիկ շալէ, պարտէզով», ասում էր ստուարաթղթէ քառակուսի ցուցանակազդիրը, որի մնանութիւնը մօտաւորապէս ճիշտ գաղափար կարող էր տալ կալուածքի ծաւալի մասին: Որմաթղթերը թարմ էին և գեղջկային, ներկերը բոլորովին թարմ, իսկ վայրի խաղողից հիւսուած տաղաւարի կողքին դրուած պարտէզ ջրելու տակառը ջրի աւազանի դեր էր խաղում: Աւելցրէք այդ բոլոր առաւելութիւններին և այն, որ միմիայն մի ցանկապատ էր բաժանում այդ դրախտը մի ուրիշ բոլորովին նոյնանման «պարտէզով շալէից», ուր ապրում էին գանձապետ Սիդիզմունդ Պլանուսն ու իր քոյրը: Տիկին Շէրի համար այդ մի թանկագին հարեանութիւն էր: Երբ խեղճը ձանձրանում էր, վերցնում էր մի կոյտ ձեռագործ ու կարկատաններ և գնում օրիորդ Պլանուսի տաղաւարը, ուր շացնում էր այդ պառաւ օրիորդին, պատմութիւններ անելով իր փառաւոր անցեալի մտախն Դժբախտաբար նրա ամուսինը, պ. Շէրը չէր կարողանում զուարձութիւն գտնել այդպիսի բաներով:

Դեռ սկզբում ոչինչ, ամեն բան լաւ էր գնում: Ամառուայթունդ ժամանակն էր, և պ. Շէրը, միշտ սիւրտուկը հանած, նոր տունը կարգի էր բերում: Ամենափոքրիկ մեխը, որ պէտք էր լինում խփել, առիթ էր տալիս գատարկ գատողութիւնների ու անվերջ վիճարանութիւնների: Նոյնն էր և պարտէզի վերաբերմամբ: Նա սկզբում վճռել էր անզիփական պարտէզ շինել նրանից, մշտագալար սիզամարգերով և թաւուաններով հովանաւորուած ոլորապասոյտ ծառուղիններով: Բայց այդ անպիտան թաւուանները շատ դանդաղ էին աճում:

— Ե՞ն, ուզում եմ մրգատու պարտէղ շինել, ասում էր  
անհամբեր Շէքը:

Եւ անա նա երազում է ունենալ եզերքներին կանաչեղէն  
ցանած լորու մարդեր և պատերի կողքին տնկած դեղձենիներ,  
ու ամբողջ առաւտները փորում է պարտէզը, մտաղրաղ կեր-  
պով կիտելով յօնքերը և կնոջ առաջ ճակատը ցուցամոլարար  
սրբելով, որպէսզի նրան ասել տայ.

— Դէ մի քիչ հանգստացիր, այ մարդ... սպանելու հօ չես  
քեզ:

Վերջ ի վերջոյ, պարտէզը խառը պարտէղ եղաւ—կէսը  
ծաղիկ, կէսը պատուղներ, մասամբ ծառաստան, մասամբ բանջա-  
րանոց, և պ. Շէքը, ամեն անգամ Պարիզ գնալիս, անպատճառ  
զարդարում էր կուրծքը՝ խրելով կոճակի մէրքի մէջ իր ծաղկա-  
նոցից քաղած մի վարդ:

Քանի որ լաւ եղանակներ էր գեռ անում, մարդ ու կնիկ  
հա հիանում էին ամրոցների յետեւում մայր մոնող արևի վեր-  
ջալոյսից, ցերեկների երկարութիւնից, գիւղական հրաշալի օդից՝  
երբեմն-երբեմն երեկոները՝ բաց պատուհանների մօտ նստած  
նրանք երգում էին երկայն, և ֆերդինանդը, դիտելով շրջա-  
պատային երկաթուղու լապտերների հետ միաժամանակ փայլել  
սկսող աստղերը, քնարերգական տրամադրութեան մէջ էր ընկ-  
նում... Բայց ինչ տիրութիւն պատեց նրանց, երբ սկսուեցին  
անձրենները և նրանք այլ ևս չէին կարողանում տնից դուրս  
գալ: Տիկին Շէքը, իբր խակական պարիզուհի, սկսեց ափսոսան-  
քով յիշել Մառէյի փոքրիկ փողոցները ու իր գնալ-գալը Բլան-  
Մանու շուկան և թաղի փաճառատունները:

Լուսամուտը նրա գիտանոյն էր և կարուծեի տեղը, և նա  
ապակու միջով դիտում էր շարունակ իրանց փոքրիկ պարտէզը,  
—ուր սերմ ընկած պատառուկներն ու ծաղկաթուփ հնդկակա-  
տիմները ցանկապատից պոկ եկած յետ էին քաշուել յոդնած  
տեսքով,—երկաթուղու մշտադալար հողաթմբերի երկար և ու-  
ղիղ գիծը և մի քիչ հեռում, Պարիզի հանրակառքերի կայա-  
րանը, որոնց բոլոր կայարանները հրապութիչ տառերով գրւած  
էին ջնարակուած պատկերի վրայ: Ամեն անգամ, երբ այդ հան-  
րակառքերից մէկը տեղիցը շարժւում էր ճանապարհ ընկնելու  
համար, նա աչքը ման էր ածում յետելից, —ինչպէս կայէննում  
կամ Նումէայում գանուող մի ծառայող դիտում է ֆրանսիա  
վերադարձող շոգենաւը,—երևակայութեամբ գնում էր հետք ու  
գիտեր թէ որ կէտում նա կանգ կ'առնի և որ կէտում նա ծանր-  
ծանր պտոյտ կը տայ՝ անիւներով քերելով խանութների պատու-  
հանները...

Իսկ պ. Շերը զարհուրելի էր դարձել, փակուած մնալով տանը, և այլ ևս չէր կարողանում աշխատել պարտէղում, կիւրակի օրերը ամրութիւնների պատնէշը ամայի էր բոլորովին, այլ ևս հնարաւորութիւն չը կար զբօնելու խոտի վրայ նախաճաշող բանուոր ընտանիքների մէջ և գնալ մի խմբից միւսը, իբր դրացի, ասղագործ հողաթափներով և մօտակայքի հարուստ կալուածատէրի հեղինակաւորութեամբ: Այդ բանի պակասն էր առանձնապէս զգում այդ մարդը, որ մեռած էր նրա համար, որ իրանով զրազուեն: Այսուհետեւ անգործ մնալով և չունենալով մէկը, որի առաջ պարծենար, և որ լսէր նրա ծրագիրները, նրա պատմութիւնները և Օրլէանի գուշախն պատահած արկածը,— այդպիսի մի արկած էլ, զիտէք, իրան էր պատահել երիտասարդ հասակում,— դժբախտ ֆերդինանդը սկսեց յանդիմանութիւններ թափել իր կնոջ գլխին:

— Աղջիկդ մեզ քչել է Պարիզից... Աղջիկդ ամաչում է մեզնից...

Էլ ուրիշ խօսք չէր լսում: հէնց հա «աղջիկդ... աղջիկդ... ու աղջիկդ...»: Որովհետեւ, լի զայրոյթով Սիդոնիի դէմ, նա հրաժարում էր նրանից, կնոջ վրայ միայն ցցելով այդ հրէշաւոր և փշացած զաւակի պատախանաւութիւնը: Եւ խեղճ կնիկը կատարեալ սփոփանք էր զգում, երբ ամուսինը նստում էր կայարանի հանրակառենքից մէկը, որպէս զի գնար դտնէր Դրլօբէին, որ միշտ պարապ ժամանակ ունէր հետը ման գալու, և սիրտը հովացնէր, պատմելով բոլոր իր կսկիճները իր փեսայի ու աղջկայ դէմ:

Հոչակաւոր Դըլօբէին էլ չարացած էր Ուխլէրի դէմ, և նրա մասին խօսելիս սիրում էր ասել, թէ նա «ընկերամոռ մարդ է»:

Մեծ մարդը յոյս ունէր նոր ընտանիքի անբաժան մասը կազմել, դառնալ այդ ընտանիքում տանահանդէմների կազմակերպիչ, ճաշակի դատաւոր: Իսկ, ընդհակառակը, Սիդոնին սկսել էր նրան շատ սառն ընդունել և նիսէրը մինչև անգամ այլ ևս գարեջրատուն չէր տանում նրան: Սակայն դերասանը շատ էլ բարձրածայն չէր յայտնում իր տրտունջը, և ամեն անգամ Ուխլէրին պատահելիս, չափազանց սիրալիր ու շողոքորթ կերպով էր վարւում հետը, որովհետեւ շուտով կարօտութիւն էր ունենալու նրանից:

Յոզնելով խելացի թատրոնապետի սպասելուց ու տեսնելով, որ ոչ ոք չէ առաջարկում իրան՝ տարիների ընթացքում ակնկալած գերը, Դըլօբէլը վճռել էր մի թատրոն գնել ու անձամբ շահագործել: Փողի կողմից նա յոյս ունէր Ուխլէրի վրայ:

Հէնց այդ ժամանակները Տամպլ բուլվարում մի փոքրիկ թատրոն էր ծախուռմ թատրոնապետի մասնկութեան պատճառով։ Դըլօբէլը խօսեց այդ բանի մասին Ռիսլէրի հետ սկզբում շատ անորոշ կերպով, ենթադրական ձևով։ — «Ծահաւէտ բան կարող է լինելու։ Ռիսլէրը լսում էր իր սովորական պաղարիւնութեամբ, ասելով «Ճիշտ որ, այդ շատ լաւ բան կը լինէր ձեզ համար»... իսկ յետոյ, երբ Դըլօբէլը բացուեց ու ուղղակի ասաց, նա, չը համարձակելով «չէ» ասել, պաշտպանուում էր՝ «կը մտածեմ... յետոյ չը տեսնենք... չէ չեմ ասում...» և այլն այդպիսի անորոշ բառերով։ բայց ի վերջոյ արտասանեց այս չարաբաստիկ խօսքերը՝ «պէտք է տեսնել նախահաշիւր»։

Մի ամբողջ շաբաթ գերասանը գլուխ էր ջարդում, ծրագիրներ կազմում, թուանշաններ շարում իրար կողքի, նստած կնոջ ու աղջկայ արանքին, որոնք զմայլած դիտում էին նրան և հարբում այդ նոր երազից։ Տնուորներն ասում էին՝ «պ. Դըլօբէլը թատրոն է առնում»։ Բուլվարում, գերասանների յաճախած սրճարաններում, էլ ուրիշ խօսակցութեան նիւթ չը կար։ Դըլօբէլը չէր թագցնում, որ ինքը փողատէրի տեղ է արել և այդ բաւական էր, որ նրան շրջապատէին մի խումբ անպաշտօն գերասաններ, հին ընկերակիցներ, որոնք գալիս էին ու ընտաներար խփելով ուսին լիշեցնում նրան։ «Գիտես, բարեկամ!...»։ Նա խոստանում էր զեր տալ, նախաճաշում էր սրճարանում, այնտեղ նամակներ էր գրում, մատների ծացրով ողջունում էր ներս մտնողներին, այս ու այն անկիւնում տաք-տաք խօսում էր զանազան մարդկանց հետ, և արդէն երկու թերմաշ հեղինակներ կարդացել էին նրա մօտ մի դրամա եօթ տեսարանով, որ նրա ներկայացումների բացման համար այնպէս յարմար էր, «ինչպէս մի ձեռնոց ձեռի համար»։ Նա ասում էր՝ «իմ թատրոնը» և նրան նամակ ուղարկելիս հասցէն գրում էին «Պարոն թատրոնապետ Դըլօբէլին»։

Ծրագիրն ու նախահաշիւր պատրաստելոց յետոյ՝ նա գրնաց գործարանը Ռիսլէրին տեսնելու։ Ռիսլէրը, այդ բոպէին շատ զբաղուած լինելով, ժամադիր եղաւ պատահելու Բլօնդէլի փողոցում, և նոյն երեկոյ Դըլօբէլը, առաջինը զալով գալեցրատուն, տեղ ըռնեց իրանց հին սեղանի մօտ և, մի աման գարեջուր ու երկու բաժակ պահանջելով, սկսեց սպասել։ Նա երկար սպասեց, աչքը դռանը, ջղային անհամբերութեամբ։ Ռիսլէրը չը կար։ Ամեն անզամ, երբ մէկը ներս էր մտնում, գերասանը շուռ էր զալիս դէպի գուռը։ Նա թղթերը գրել էր սե-

զանի վրայ և կարդում էր զանազան շարժումներ անելով ձեռքերով, դլսով ու շրթունքներով:

Հրաշալի, աննման գործ էր: Արդէն նա երեակայում էր իրան՝ իր սեփական թատրոնում՝ ներկայացնելիս, — որովհետեւ այդ ամենաշական կէտն էր, — յատկապէս իր համար յօրինուած դերեր, իր ձիրքին արժանի դերեր, որոնց մէջ նա ահագին ապաւորութիւն է գործելու....

Յանկարծ դուռը բացուեց և չիրուիների ծխի մէջ երեաց պ. Շէքը, որ նոյնքան զարմացած ու դժգո՞ն մնաց Դըլօրէլին տեսնելով, որքան և Դըլօրէլը՝ նրան տեսնելով, նա առաւոտեան գոնել էր փեսային, որ հետը շատ լուրջ խօսելիք ունի և կը սպասի նրան զարեջրատանը: Պատուի հարց էր այդ, որ պէտք է վճռէին միայն տղամարդիկ, իրար մէջ խօսելով: Այդ պատուի հարցը խսկապէս նրա մէջ էր կայանում, որ պ. Շէքը թողել էր Մօնութի փոքրիկ տունը և ամենաթունդ առետրական թաղում, Մայլ փողոցում վարձել մի վաճառատուն իր վրայի միջնայարկով... Մի վաճառատուն... Այն, վաճառատուն... Ու յետոյ սկսել էր մի քիչ վախ զգալ իր արած համարձակ քայլից, անհանգստանալով, թէ ինչպէս կը վերաբերուի այդ բանին իր աղջիկը, մանաւանդ որ վաճառատունը շատ աւելի թանգ արժէր, քան Մօնութի տունը և դեռ մնձ նորոգութիւններ պէտք էր անել մէջը՝ հէնց տեղափոխուելիս: Վաղուց ի վեր ձանաչելով իր փեսայի բարութիւնը, պ. Շէքը վճռել էր նախ և առաջ նրան դիմել, յուսալով նրան գրաւել իր կողմը և նրա վրայ քցել այդ ընտանեկան յեղափոխութեան պատասխանատութիւնը: Եւ ահա Ռիսլէրի տեղ Դըլօրէլին էր նա տեսնում:

Նրանք յօնքերի տակից խեթ-խեթ նայեցին իրար, միենոյն լակամանի կողքին պատահած երկու շան նման: Նրանցից իւրաքանչիւրը հասկացաւ խսկոյն, թէ ինչի էր սպասում միւսը, և նրանք չը փորձեցին խարս տալ իրար:

— Փեսսս այստեղ չէ, հարցրեց պ. Շէքը, աչքի պոչով նայելով սեղանի վրայ փոած թղթերին և ստորագծելով «փեսաս» խօսքը, լու ցոյց տալու համար, որ Ռիսլէրը իրան մարդն էր և ոչ թէ մի ուրիշինը:

— Ես սպասում եմ նրան, պատասխանեց Դըլօրէլը, հաւաքելով թղթերը:

Շըթունքները իրար հուպ տուած, նա աւելացրեց վեհ, խորհրդաւոր և, ըստ սովորականին, թատրոնական կերպով:

— Շատ կարևոր բան ունեմ հետք:

— Ես էլ նմանապէս... հաստատեց պ. Շէքը, որի ճաղատ

գլխի վրայ մնացած երեք հատ մազերը ցցուեցին խոզուկի փշերի նման:

Եւ այդ ասելով, նա եկաւ նստեց Դրլօբէլի կողքի բազմոցի վրայ ու նրա պէս պահանջեց մի աման գարեջուր ու երկու բաժակ, ու յետոյ, ձեռքերը գրպանը խրած, մէջքը պատին դէմ տուած ու պինդ տեղումը նստած, սկսեց սպասել: Այդ երկու իրար կողքի դրուած և մինոյն բացակայ անձի համար պահանջուած դատարկ բաժակները կարծես կոտի էին կանչում միմեանց:

ՈՒԽԱԼԵՐՆ ԷԼ ՀԸ ԿԱՐ ՈՒ ՀԸ ԿԱՐ:

Մեր երկու լուս ու մունջ գարեջուր խմորները արդէն սկսում էին համբերութիւնները կորցնել անհանդիստ շարժուամ էին նստած տեղներումը և նրանցից իւրաքանչիւրը սպասում էր, թէ միւսը կը ճանձրանայ վերջապէս ու կ'երթայ:

Ի վերջոյ, նրանք չը կարողացան զսպել իրանց դժգոհութիւնը և, բնականաբար, կուժն ու կուլան կոտրուեց խեղձ ՈՒԽԱԼԵՐԻ զլիսին:

—Ի՞նչ անքաղաքավարութիւն է. կարելի՞ է միթէ այսքան երկար սպասեցնել իմ հասակի մի մարդու, սկսեց պ. Շէքը, որ միմիայն այսպիսի գէպքերում էր առաջ բերում իր մեծ տարիքը:

Պ. Դրլօբէլը վրայ բերեց.

—Կարծեմ, ճիշտ որ, ձեռ է առել մեղ:

—Անշուշտ ճաշին հիւրեր է ունեցել պարոնը, աւելցրեց պ. Շէքը:

—Եւ ինչ հիւրեր... արհամարհու եղանակով բացականչեց հոչակաւոր Դրլօբէլը, որի մէջ սկսել էին զարթնել կսկծալի յիշողութիւններ:

—Բանը նրանումն է... շարունակեց պ. Շէքը:

Նրանք մօտեցան իրար ու սկսեցին խօսել: Երկուսն էլ ոփ ունէին ՈՒԽԱԼԵՐԻ ու Սիդօնի դէմ: Սրտները բաց արեցին: Այդ ՈՒԽԱԼԵՐԸ, չը նայելով իր միամիտ մանկական կերպարանքին, խսկապէս ոչ ազլ ինչ էր, եթէ ոչ մի եսամոլ, մի նորելուկ: Նրանք ծիծաղում էին նրա արտասանութեան, նրա շէնք ու շնորհքի վրայ, և անում էին նրա սովորական տարօրինակ ձևերը: Յետոյ, նրանք խօսք բաց արին նրա ընտանեկան կեանքի մասին և, ձայները ցածացնելով, սկսեցին գաղտնիքներ յայտնել իրար ու մտերմաբար ծիծաղել, նորից բարեկամ դարձած:

Պ. Շէքը շատ հեռու էր գնում.—Թող զգոյշ կենայ. այնքան յիմար գտնուեց, որ թողեց որ ծնողներս հեռանանք մեր զաւակից. եթէ զլիսին մի բան գալու լինի, մեղ մեղագրելու

ամենավին տեղիք չունի: Եթէ մի աղջիկ աչքի առաջ չունի այլ ևս իր ծնողների բարի օրինակը, հասկանում էք...

— Սնչուշտ... անշուշտ... ասում էր Դըլօրէլը. մանաւանդ որ Սիդօնին շատ կօքէտն է դարձել... Ասենք, ինչ պէտք է լինի որ: Ռիսլէրը կը կրի միայն իր արժանի պատիժը: Միթէ նրա հասակին ունեցող մարդը պէտք է... Սըսս եկաւ:

Ռիսլէրը մի բոպէ առաջ մտել էր գարեջրատունը և մատենում էր խօսակիցներին, աջ ու ձախ սղմելով ծանօթների ձեռքը:

Սկզբում մի քանի բոպէ երեք բարեկամները վատ զգացին իրանց: Ռիսլէրը ներողութիւն խնդրեց, ինչպէս որ կարող էր: Տանն էր ուշացել, Սիդօնին հիւրեր ունէր,—Դըլօրէլը սեղանի տակին հրեց պ. Շէրի ոտը,—և այդ բաները ասելիս խեղճ մարդը շուարած մտածում էր, թէ դատարկ բաժակներից որ մէկի առաջը պէտք է նստի ինքը:

Դըլօրէլը մեծահոգի գտնուեց:

— Դուք խօսելիք ունէք, պարոններ, խօսեցէք առանց քաշուելու:

Եւ քթի տակին ասաց, աչքով անելով Ռիսլէրին.

— Թղթերը բերել եմ:

— Թղթերը... բացականչեց Ռիսլէրը շուարած:

— Նախահաշիւր... շնչաց գերասանը:

Այսուհետեւ, ցոյց տարով, թէ ինքը ամենավին չէ ուզում լրել նրանց խօսակցութիւնը, նա քաշուեց մի անկիւն ու սկսեց կարդալ իր թղթերը, գլուխը կոթնած ձեռներին ու ձեռները դրած ականջներին:

Նրա կողքին, միւս երկուսը խօսում էին, սկզբում ցած ձայնով, յետոյ աւելի բարձր, որովհետեւ պ. Շէրի զիւ ու ծղրտանձայնը չէր կարող երկար ժամանակ չափաւորուել...—Ինքը հօայն հասակում չէր, որ կենդանի թաղուէր յետ ընկած անկիւնում... Նա ձանձրութիւնից կը մեռնէր Մօնուժում... Մայլ ու Սանտիէ փողոցները, առետրական թաղերի աղմուկն ու կենդանութիւնը, ահա թէ ինչ էր պէտք նրան:

— Այն, բայց վաճառատունը... ինչի՞ համար էր... վախվիելով համարձակուեց նկատել Ռիսլէրը:

— Ինչի՞ համար է վաճառատունը... ինչի՞ համար է վաճառատունը, կրինում էր պ. Շէրը, զատկական ձուի պէս կարմրած և բարձրացնելով ձայնը, որքան ուժումը կար... Որովհետեւ ես վաճառական եմ, պարոն Ռիսլէր: Վաճառական և վաճառականի որդիի... Օհ, զիւեմ ինչ էք ասելու: Թէ առետուր չունեմ, չի... Բայց ով է մեղաւորը... Եթէ այն մարդիկ, որոնք

ինձ, ինչպէս մի զառամեալ ծերունու, փակել էին Մօնոռուժում, Բիսէտրի անկելանոցի մօտերքում, դրա փոխարէն խելք արած լինէին դրամագլուխ տալու ինձ մի որ և է առետրական ձեռնարկութեան համար...—Այդտեղ Ռիվլէրին յաշողեց լոեցնել և նրան այնուհետեւ լուսում էին միայն կցկառու խօսքեր՝ «...աւելի յարմար վաճառատուն... բարձր առաստաղով... օդը շատ է... ապագայի ծրագիրներ... հակայպիան գործ... կը խօսեմ, երբ որ ժամանակը դայ... շատերը կը զարմանան»; Դըլօրէլլ լսելով հանդերձ այդ հատ ու կտոր խօսքերը, հետզհետէ աւելի ու աւելի էր խորասուլում իր թղթերի ընթերցման մէջ ու եռանդուն կերպով մէջը դէմ անում նրանց, լսել չուզող մարդու պէս Ռիվլէրը, շուարած, երբեմն-երբեմն մի կում գարեջուր էր խմում մի բան արած լինելու համար; Ի վերջոյ, երբ պ. Շէքը հանգստացաւ և ոչ առանց պատճառի, փեսան ժպտալով դարձաւ դէպի հոչակաւոր Դըլօրէլլ, որ հանդիպեց նրան իր սառն ու խիստ հայեացքով, որ կարծես ասելիս լինէր՝ «Իսկ Ես...»:

—Ա՛խ, Տէր Աստուած... ճիշտ որ... մոտածեց խեղձ մարդը:

Եւ իսկոյն փոխելով աթոռն ու բաժակը, նա եկաւ նստեց դերասանի առաջը. բայց պ. Շէքը չը գիտէր այնպէս պահել իրան, ինչպէս Դըլօրէլլ; Փոխանակ համեստօրէն հեռու քաշուելու, նա մօտեցրեց իր բաժակը ու միացաւ նրանց խմբին, այնպէս որ մեծ մարդը, որ չէր ուզում նրա ներկայութեամբ խօսել, երկրորդ անգամ հանդիսաւոր կերպով գրպանը դրեց թղթերը ասելով Ռիվլէրին.

—Յետոյ կը տեսնենք:

Շատ յետոյ, իսկապէն, որովհետեւ պ. Շէքը այսպէս էր դատել.

«Փեսաս շատ բարեհոգի է... եթէ այս լօթու հետ թողնեմ, ով գիտէ որքան փող դուրս կը քաշի նրանից»:

Եւ նա մնում էր, որ հսկի: Դերասանը կատաղել էր: Գործը ուրիշ օրուայ յետաձգէր: Անհնար էր: Ռիվլէրը հէնց նոր ասաց նրանց, որ միւս օրը ինքը մի ամսով գնալու էր Սալինի:

—Մի ամսով Սալինի... բացականչեց պ. Շէքը, յուսահատուած, տեսնելով որ փեսան դուրս է պրծնում ձեռքիցը..., իսկ գործերը:

—Է՞հ, ես ամեն օր ժօրժի հետ կը գամ Պարիդ... Պ. Գարդինուայի բաներն է, ուզում էր տեսնել փոքրիկ Սիդօնին:

Պ. Շէքը թափ տուեց գլուխը: Նրա կարծիքով, այդ շատ

անխոհեմ բան էր: Գործը միշտ գործ է: Մարդ պէտք է միշտ գործի վրայ լինի, միշտ աչքը վրան պահի: Ով գիտէ, ինչ կարող է պատահել: գործարան է, կարող է գիշերը յանկարծ կրակ ընկնել: Եւ նա կրկնում էր խրատական եղանակով՝ «Տիրոջ աչքը, սիրեկիս, ուրիշ բան է»: մինչդեռ նրա կողքին նստած գերասանը, որի բանին նոյնպէս չէր գալիս Ռիսէրը գնալը, չուում էր իր խոշոր աչքերը ու տալիս նրանց միանգամայն և սուր և հեղինակաւոր արտայայտութիւն, իսկ և իսկ այնպիսի արտայայտութիւն, որ պէտք է ունենայ տիրոջ աչքը:

Վերջապէս, կէս գիշերին մօտ, Մօնուուժի վերջին հանրակառը տարաւ բռնակալ աներոջը և Դըլօրէլը հնարաւորութիւն ստացաւ խօսելու:

— Նախ և առաջ ծրագիրը, ասաց նա, չուզենալով իսկոյն և եթ խօսք բանալ թուանշանների մասին, և պէնսնէն դնելով քթին, նա սկսեց ճուոմարանորէն և, ինչպէս միշտ, բեմի վրայ գգալով իրան՝ «Երբ մարդ սառը կերպով քննութեան է առնում զառամութեան այն աստիճանը, որին հասել է Ֆրանսիայում դրամատիկական արուեստը, երբ մարդ չափում է այն տարածութիւնը, որ բաժանում է Մօլիէոփ թատրօնը...»: Եւ այդպէս գնում էր մի քանի երես: Ռիսէրը լուսմ էր, ծծելով չիրուխը և չը համարձակուելով շարժ գալ, որովհետև Դըլօրէլը կարդալիս ամեն րոպէ նայում էր նրան պէնսնէի վրայից տեսնելու համար, թէ ինչ տպաւորութիւն են գործում նրա վրայ իր խօսքերը: Դժբախտաբար, երբ գեռ ծրագրի մէջտեղումն էին, սրճարանը փակեցին, ճրագները հանդցնում էին, պէտք էր գնալ... Իսկ նսխահաշիւը... Պայմանաւորուեցին, որ այդ թուղթը կը կարդան գնալիս, ճանապարհին: Ամեն լապտերի մօտ կանգ էին առնում: Դերասանը առաջ էր բերում իր թըւանշանները... Այսքան դահլիճի համար, այսքան լուսաւորութեան համար, այսքան իբրև տուրք յօդուա աղքատների, այսքան գերասաններին... Այդ գերասաններին վերաբերեալ հարցի վրայ նա պնդում էր:

— Գործի լաւութիւնը նրանումն է, ասում էր նա, որ մենք ոչինչ չենք վճարելու առաջին գերակատարին... Մեր առաջին գերակատարը Բիբին կը լինի... (Իր մասին խօսելիս, Դըլօրէլը սիրում էր Բիբի անուանել ինքն իրան...) Առաջին գերակատարներին առհասարակ քսան հազար ֆրանկ են տալիս... ստիպուած չը լինելով այդ փողը վճարել, կարող էր այնպէս համարել, թէ գրպաններդ էք դնում այդ քսան հազար ֆրանկը: Ճիշտ չեմ ասում, հը:

Ռիսէրը պատասխան չէր տալիս: Նրա դէմքը բռնազբօսիկ

Էր և աչքերը շաղուած էին, ինչպէս լինում են մաքով ուրիշ տեղ գտնուող մարդու դէմքն ու աչքերը: Նախահաշուի ընթերցումը վերջացնելուց յետոյ, սարսափով տեսնելով, որ մօտենում է Վիէլ-Շրիէտ փողոցի պտուտանքը, Դըլօբէլը չփշչիտակ դրեց հարցը: Ուզում էր արդեօք նա թէ ոչ ձեռնարկել այդ գործը:

—Ոչ... չեմ ուզում, ասաց Ռիսլէրը, ոգեսրուած մի հերսուական քաջութեամբ, որ ներչնչում էր նրան գլխաւորապէս գործարանի մօտիկութիւնը և այն միտքը, թէ նա վասնգի էր ենթարկելու իր ընտանիքի բախաւ: Դըլօբէլը շմեց: Նա կարծում էր, թէ բանը սարքուել է արդէն, և այժմ, չափազանց յուզուած և թղթերը ձեռքին բռնած, նայում էր Ռիսլէրին չուծ աչքերով:

—Զէ, շարունակեց Ռիսլէրը... Նո չեմ կարող կատարել ձեր ինդրածը... ահա թէ ինչու:

Մանր ու բարակ, իր սովորական դանդաղկոտութեամբ, նա սկսեց բացատրել, որ ինքը հարուսա մարդ չէ: Թէև նշանաւոր առևտրական տան ընկերակից էր, բայց տրամադրելի փող չունէր: Ժօրմն ու ինքը ամեն ամիս որոշ գումար էին ստանում գրամարկղից: Խսկ յետոյ տարեկերջի հաշուեկոսի համաձայն բաժանում էին մէջները եղած արդիւնքը: Տուն-տեղ գնելը թանդ էր նստել նրան,—ինչ որ յետ քցած փող ունեցել էր, ծախսել էր: Մինչև տարեկերջն էլ գեռ չորս ամիս կար: Ո՞րտեղից էր վերցնելու այն 30,000 Գրամսկը, որ խալոյն և եթ պէտք էր վճարել թատրոնը գնելու համար: Եւ բացի այդ, չք որ գործը կարող էր անաջող գնալ:

—Այդ անկարելի բան է... Բիբին հօ չի մեռել:

Եւ այդ ասելիս, խեղճ Բիբին ձգւում, շիտկում էր. բայց Ռիսլէրի վծիոր հաստատ էր, և Բիբիի բոլոր գատողութիւնները դէմ էին առնում նոյն բացասական խօսքերին. «Յետոյ, երկու տարի, երեք տարի անցած, չեմ ասում, թէ...»:

Դերասանը երկար մաքանեց, քայլ առ քայլ պաշտպանելով հողը: Նա առաջարկեց փոփոխութիւններ մտցնել նախահաշուի մէջ: Կարելի էր այնպէս անել, որ աւելի էժան նստէր... «Ի՞նչ էլ լինի, ինձ համար այդ շատ թանգ է, ընդհատեց Ռիսլէրը... Իմ անունը ինձ չէ պատկանում: Նա ամբողջ առևտրական տան անուան մի մասն է կազմում: Ես իրաւունք չունեմ վասնդի ենթարկել անունս: Ի՞նչպէս գուր կը գայ ձեզ, եթէ մնանկանամ»:—Խեղճի ձայնը գողում էր մնանկանալ բառը արտասանելիս:

—Բայց չք որ ամեն ինչ իմ անունովս է լինելու, առարկեց

ԴՐԼՈԲԷԼԸ, որ այդպիսի նախապաշարմունքներ չունէր մանկանալու վերաբերմամբ:

Նա ամեն ինչ փորձեց, մէջ բերեց գեղարուեստի նուիրական շահերը, այստեղ հասաւ նոյն իսկ, որ սկսեց խօսել սիրունիկ գերասանութիւնների մասին, որոնց հեշտագրգիռ հայեացքները... Ռիսլէրը քանի քան ծիծաղեց.

—Է՞ն, ինչ կատակներ եք անում... ինչեր եք ասում... Մոռանում եք, որ երկուսս էլ պսակուած մարդիկ ենք, և, ի դէպ, այժմ շատ ուշ է, այնպէս որ մեր կանացք մեղ անպատճառ սպասելիս կը լինեն... Չեք նեղանալ, այնպէս չՔ... Ես չեմ մերժում, դուք հօ հասկանում եք... Հա, տարեվերջի հաշուից յետոյ եկէք ինձ մօտ: Նորից կը խօսենք... Այ, Սշիլլ քեռին հանգնում է դադը... Ես գնացի: Մնաք բարե:

Գիշերուայ ժամի մէկից անց էր, երբ դերասանը վերադառն տուն:

Կինն ու աղջիկը սպասում էին նրան, ինչպէս առհասարակ, աշխատանքը ձեռներին, բայց անսովոր կերպով կենդանացած ու աենդու դրութեան մէջ: Այն մեծ մկրատը, որով տիկին ԴրլոբէլԸ կարտում էր արոյրէ թելերը, անդադար դողդողում էր տարօրինակ կերպով, և Դէզիրէի բարակ մատները, պաճուճանքները պատրաստելիս, այնքան արագ-արագ էին շարժւում, որ եթէ նայող լինէր, աչքերը կը շաղուէին: Կօլիբրիների երկար փետուրներն էլ, որոնք դարսած էին նրա առաջ սեղանի վրայ, կարծես նոյնպէս սովորակիան օրերից աւելի ճոխ գոյներ ունէին և ինչոր մի առանձին փայլ: Բանը նրանումն է, որ Յոյս կոչուող գեղեցկունի այցելուն այդ երեկոյ եկել էր այդտեղ: Նա նեղութիւն էր կրել մութ սանդուխներովք բարձրանալ հինգերորդ յարկը և, բանալով այդ փոքրիկ բնակարանի դուռը, լուսաճաճանչ մի հայեացք քցել նրա ներսը: Ինչքան էլ մարդ հիասթափութիւններ տեսած լինի կեանքում, չի կարող չը շանալ այդ մոդական շողքերից:

—Ա՞խ, եթէ հայրիկին յաջողէր... ասում էր ժամանակ առ ժամանակ տիկին ԴրլոբէլԸ, կարծես ուզելով ամիոփ կերպով արտայայտել այն հազար ու մի երջանիկ երազները, որոնց անձնատուր էր լինում նրա միտքը:

—Կը յաջողի, մայրիկ, հաւատացած եղիր. պ. Ռիսլէրը այնքան բարի է, ես երաշխաւոր եմ նրա կողմից: Սիրոնին էլ շատ սիրում է մեղ, թէս ամուսնանալուց յետոյ կարծես մի քիչ մոռացութեան է տալիս իր բարեկամներին: Բայց դէ պէտք է ուշադրութեան առնել նաև մեր դրութիւնների տարբերու-

թիւնը... ես որ, յամենայն դէպս, երբէք չեմ կարող մոռանալ ինձ համար արածը:

Եւ յիշելով, թէ ինչ էր արել Սիդօնին իր համար, խեղճ կաղիկը սկսեց աւելի ևս տենդում կերպով աշխատել: Նրա էլեքտրականացած մասները սկսեցին շարժուել կրիսնակի արագութեամբ: Կարծես նա վազում էր ինչ-որ մի խուսափող, անբրոնելի բանի յետելից, ինչպէս օրինակ, բախտի յետելից կամ այնպիսի մարդու սիրոյ յետելից, որ ձեզ չէ սիրում:

«Նա ինչ է արել քեզ համար», պէտք է հարցնէր մայրը, բայց աղջկայ ասածները այդ րոպէին ամենեին չէին հետաքըրքը քրում նրան. նա մտածում էր միմիայն իր մեծ մարդու մասին:

—Հը, երևակայում ես, աղջիկս... Ա՛խ, եթէ հայրիկը սեփական թատրոն ունենայ, եթէ նորից սկսի խաղալ առաջուան պէս: Դու չես կարող յիշել, շատ փոքր էիր այն ժամանակ: Օհ, գարմանալի յաջողութիւն ունէր, անվերջ դուրս էին կանչում: Մի երեկոյ, Ալանսոնում, թատրոնի յաճախորդները ուկէ պսակ տուեցին նրան... Օհ, որքան փայլուն էր նա այն ժամանակ, որքան ուրախ ու երջանիկ: Ով որ այժմ տեսնում է խեղճ մարդուն, չէ ճանաշում նրան, այնքան փոխուել է նա անբախտ կեանքի շնորհիւ... Բայց ես հաւատացած եմ, որ բաւական է մի փոքր յաջողութիւն, որպէս զի նա նորից նոյն երիտասարդ և ուրախ մարդը լինի... Բայց այդ այնպիսի փողեր են աշխատում թատրոնապետները: Նամտում թատրոնապետը սեփական կառք ունէր: Երևակայում ես մեզ սեփական կառքում... Զէ, ասա, երևակայում ես.. Քեզ հէնց այդպիսի բան է հարկաւոր: Դու կը կարողանաս դուրս գալ տանից, մի քիչ կտրուել այդ բաղկաթուից: Հայրիկը մեզ ամարանոց կը տանի, և դու ջրի ու ծառի կարօտդ կ'առնես:

—Ա՛խ, ջնւը, ծառ... դողդողալով շնչաց գունատ ճնճակը:

Այդ րոպէին ներքեւի մեծ գուռը բացուեց ու պինդ խիուեց և գաւթում լսուեց պ. Դըլօբէլի կանոնաւոր քայլուածքի ձայնը: Սենեկալում մի րոպէ անձկութիւն տիրեց. մայր ու աղջիկ ձայները կտրած ու շունչները բռնած չէին համարձակուում նոյնիսկ նայել իրար երեսի, և մօր մեծ մլրատը այնպէս էր գողգողում, որ արոյրի թելը բոլորովին ծուռ ու մոռ էր կտրատում:

Անկասկած, սարսափելի էր խեղճ գերասանի ստացած հարուածը: Ի գերե ելած երազներ, ստորացուցիչ մերժումն, ընկերների ծաղրը, սրճարանի հաշիւը իր թատրոնապետութեան ամբողջ ընթացքում պարտքով կերած նախաճաշերի համար,—

հաշիւ, որ պէտք էր իսկոյն վճարել—այդ բոլորը պատկերացաւ նրա առաջ հինգ յարկանի տան սանդուխների մթութեան և խաղաղութեան մէջ։ Սրտին որ դանակ խփէիր՝ արիւնչէր կաթիլ… Եւ սակայն, այնքան զօրեղ էր նրա մէջ դերասանական բնաւորութիւնը, որ, չը նայելով իր վշտի խորին անկեղծութեան, նա հարկաւոր համարեց ողբերգական և պատշաճական դիմակ հագնել։

Մտնելուն պէս, նա կանգ առաւ, օրհասական հայեացքով նայեց արհեստանցին, բանուածքով ծանրաբեռնուած սեղանին, իր փոքրիկ ընթրիքին, որ պատրաստ սպասում էր նըրան մի անկիւնում, և իր երկու անձկալից հարազատներին, որոնք սենոել էին նրա վրայ իրանց փայլուն աչքերը։ Դերասանը մի բոպէ մնաց անխօս,—իսկ դուք զիտէք, թէ որքան երկար է թւում թատրոնում դերասանի մի բոպէ տեղ լուսաթիւնը,—յետոյ երեք քայլ արեց, վայր ընկաւ սեղանի մօտ դրուած մի ցած աթոռի վրայ ու ասաց սուլելու ձայնով։

—Օ՞ֆ, նզովք կայ իմ զլիսին \*։

Եւ այդ ասելով, նա բոռնցքով այնպիսի սարսափելի հարուած իջեցրեց սեղանին, որ մօդային թունիկներն ու ձանձերը շաղ անցան սենեակի չորս անկիւնը։ Կինը, վախուրած, վեր կացաւ տեղից ու երկշու կերպով մօտեցաւ նրան, մինչ Դէզիրէն կիսով չափ բարձրացաւ իր բաղկաթոռի մէջ, անձկութիւնից զղաձգաբար ծամածուած դէմքով։

Աթոռի մէջ ձկուած, կոները ուժասպառ կախ քցած, գըլուխը կրծքին քաշ արած, դերասանը խօսում էր ինքն իր հետ կցկտուր, ընդհատուող մի մենախօսութիւն էր այդ, լի դրամատիկական հառաջանքներով ու հեկեկանքներով և նզովքներով անգութ ու եսամոլ բուրդուաների դէմ, որոնք հում-հում ուտում են արուեստագէտներին ու ծծում նրանց արիւնը։

Յետոյ նա պկսեց պատմել իր ամբողջ դերասանական կեանքը, սկզբի ժամանակներում ունեցած յաղթանակները, Ալանսօնի հանդիսատեսների տուած ուկէ պսակը, իր ամուսնանալը այդ «սուրբ կնոջ» հետ,—և այդ վերջին խօսքն ասելիս, նա մասով ցայց տուեց խեղճ կնոջը, որ լացակրկնած և դողդոջուն շրթունքներով կանգնած էր նրա կողքին ու պառաւի նման զըլուխը տարութերում էր նրա ամեն մի խօսքին։

Ցիրաւի, հռչակաւոր Դըլօթէլին չը ճանաչողներն էլ այդ

\*) Ah! je suis damné.—Տրիբուլէի խօսքերը Վիկոոր Հիւզոի „Լօ՛ Roi s'amusé“-ից, որից է վերցրած ՈՒՊՈՒՏՈՍ օպէրայի ՆԻՒԹՐԻ ԵՎ. Թ.

երկար մենախօսութիւնը լսելուց յետոյ կարող էին պատմել նրա ամբողջ կենսագրութիւնը մանրամասնորէն։ Նա նկարագրում էր իր Պարփիզ գալը, իրան պատահած ձախորդութիւնները, իր կրած զրկանքները... Սակայն, աւաղ, իսկապէս ինքը չէր եղել զրկանքներ քաշողը։ Այդ հասկանալու համար բաւական էր տեսնել նրա լայն ու փարթամ դէմքը այդ երկու խեղճ կանանց լղար ու փոս ընկած դէմքերի կողքին։ Բայց դերասանը այդքան խորը չէր գնում, և շարունակելով հարբել իր դէկլամացիայի խոպերով։

—Օ՞խ, բացականչեց նա, —այնքան մաքառելուց յետոյ... Տասը, տամնը ինգ տարի է, ինչ մաքառում եմ, նեցուկ ունենալով այս անձնուէր էակներին, ապրելով նրանց աշխատած հացով։  
—Հայրիկ ջան, հայրիկ, լոիր... աղաչում էր Դէզիրէն, ձեռները իրար կցած։

—Այն, այն, ապրելով նրանց աշխատած հացով... և ես չեմ ամաչում այդ բանից։ Որովհետև սրբազն գեղարուեստի համար է, որ ես ընդունում եմ այդ անձնուէր ծառայութիւնները... Բայց էլ այստեղս է հասել։ Չափը արդէն անցել է։ Ես հրաժարում եմ...»

—Ա՞խ, այդ ինչ ես ասում, սիրելիս, բացականչեց տիկին Դըլօրէլը, նետուելով դէպի նա։

—Ո՞չ, թուղ տուր ինձ... Այլ ես ոյժից վեր է։ Իմ մէջ ըսպանեցին արուեստագէտին։ Ամեն բան պրծած է... Ես հրաժարում եմ թատրոնից։

Այն ժամանակ եթէ տեսնէիք, թէ ինչպէս մայր ու աղջիկ, փաթաթուելով նրա վզովը, սկսեցին ինդրել, որ շարունակի մաքառումը, և ապացուցանել, որ նա իրաւունք չունի հրաժարուել թատրոնից, լացներդ չէիք կարող պահել։ Դըլօրէլը դիմադրում էր սակայն։

Ի վերջոյ նա անձնատուր եղաւ և խօսք տուեց մի ժամանակ էլ դիմանալ, քանի որ այդպէս էին ցանկանում նրանք, բայց դժուար է ասել, թէ նրքան աղաչանք ու պաղատանք, նրքան գգուանքներ պէտք եղան, մինչև որ նրանց յաջողեց այդ բանը։

Մի քառորդ ժամ անցած, մեծ մարդը, որ քաղցել էր իր ասած երկար մենախօսութիւնից և արդէն սփոփուել յուսահատութիւը զեղիսուց յետոյ, սեղանի կողքին նստած կարգին ախորժակով ընթրում էր, և այդ բոլոր բանից միմիշան մի թեթև յոգնածութիւն էր մնացել մէջը, այնպէս, ինչպէս յոգնած է վնում մի գերասան, մի շատ երկար ու շատ զրամատիկական դեր խաղալուց անմիջապէս յետոյ։

Այդ գէպքերում գերասանը, որ յուզել է սոլոր հանդիսատեսներին և ինքը իսկական արտասունքներ թափել բեմում, թատրոնից գուրս գալուց յետոյ անմիջապէս մոռանում է այդ բոլորը։ Նա թողնում է իր յուզմունքը իր գերասանական օթեակում իր հագուստների ու կեղծ մազերի հետ, մինչդեռ աւելի միամիտ, աւելի սաստիկ կերպով տպաւորուած հանդիսատեսները վերադառնում են տուն կարմրատակած աչքերով ու ձմլուած սրտով և երկար ժամանակ չեն կարողանում քնել ջղերի չափազանց գրգռումից։

Խեղճ Դէզիբէն ու տիկին Դըլօբէլը շատ քիչ քնեցին այդ գիշեր։

**Թարգմ. Տ. ԹՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

(Կը շարունակուի)